

ԹՎԻՆ ՈՎ (1552)

ՔՍ ԱԾ

.....
.....

Ա Ր Դ Վ Ի

Գյուղի մեջ և շրջակայքում կան ճարտարապետական ու կոթողային բազմաթիվ հուշարձաններ: Կենտրոնում կանգնած է ավերված տանիքով մի եկեղեցի: Տեղացիները կոչում են Կարմիր վանք (X դ.): Դատելով պատերի մնացորդներից, ինչպես և մույթերից խոյացող կամարից՝ եղել է թաղածածկ: Անունն էլ, ըստ ավանդության, ստացել է լեզգիների կողմից այստեղ սպանված հայերի արյան պատճառով:

Ամենաճանաչված հուշարձանը Սրբանես վանքն է: Այս անունն առաջ է եկել Հովհան Օձնեցու անվան հապավմամբ: Գտնվում է գյուղի հյուսիսարևմտյան կողմում: Ներկա վիճակով վանքը կազմված է երկու միանավ թաղածածկ եկեղեցիներից ու զանգակատնից: Բուլորն էլ կառուցված են կիսամշակ քարերով: Հյուսիսակողմի եկեղեցին արևմտյան մուտքի մոտ օժանդակված է զողտրիկ արտաքին սրահով: Չանգակատունը, որը գտնվում է երկու եկեղեցիներից առանձին, մոտ 4 մետր հեռավորության վրա, գրեթե հավասարակողմ ուղղանկյուն շինություն է՝ պսակված սյունազարդ գմբեթով:

Շրջապատում կան բազմաթիվ տապանաքարեր, խաչքարեր ու քառակող կոթողներ: Վերջիններիս մի մասը հին է, մի մասն էլ վերամշակված է ԺԷ դարում:

Կարմիր վանքի արևելակողմում երևում են ավերված եկեղեցու հիմնապատեր:

Ավանդական է դարձել Սրբանես վանքը Հովհան Օձնեցու ձեռակերտը համարելու վարկածը, սակայն ճարտարապետական ձևերը այդ կարծիքը պնդելու հիմք չեն տալիս:

Շինություններն իրենց ներկա ճարտարապետությամբ է դարի հետ բնավ չեն կապվում, թեև հյուսիսային մատուռի որմերում առկա են հնագույն շերտեր: Ավանդության համար հիմք են ծառայել մատենագիրների վկայություններն այն մասին, որ Հովհան Օձնեցին իր ծննդավայրի՝ Օծունի մոտերքը հիմնել է մի ճգնատեղի, որտեղ թաղվել է⁶¹ խռովքի մեջ այստեղ ճգնելուց հետո:

Ուշագրավ են ականավոր հովվապետ, դիվանագետ, Հովհան կաթողիկոսին առնչվող ավանդապատումները, համաձայն որոնցից մեկի, նա անիծել է իրեն այցելած զույգ վիշապներին, որոնք քարացել են վանքից հարավ լեռան մեջ դրոշմված օձահրեշների տեսքով, որով, անկասկած, նկատի է առնվել արաբ նվաճողների դեմ նրա ականառու ձեռքբերումները:

Չնայած հուշարձանների հնությանը, վիմագիր արձանագրությունները համեմատաբար ուշ դարերից են: Համենայնդեպս, թվագրվածներից հնագույնները ԺԴ և հետագա դարերից են, որոնք, սակայն, որոշակի լույս են սփռում բնակչության սոցիալական շերտակազմի վերաբերյալ մեր պատկերացումների վրա:

Արձանագրություններից մի քանիսը Սրբանեսի վանքում են, մնացածները՝ եկեղեցիներից արևմուտք, խաչքարաշատ գերեզմանոցում:

⁶¹ Վարդան Արևելցի, ճառ ի վերայ Յոհան Օձնեցույ ըստ խնդրոյ Համագասպ Եպիսկոպոսի Հաղբատայ, Արարատ, Վաղարշապատ, 1888, թիվ 10, 584: Յայսմաւորք Ա, Կ. Պոլիս, 1834, 171, 9, Յովսեփեան, Սխիթար Այրիվանեցի, Նորագիւտ արձանագրութիւն եւ երկեր, Երուսաղեմ, 1932, 18:

699. «ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ» ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան պատին, խաչաքանդակից վեր, 1 տող.

ՄԲ ԽԱՉՍ . . .

Ծանոթ. Շարունակությունն իսպառ եղծված է, բայց այս պատառիկն էլ ժԲ դ. ավելի ուշ չէ:

ՍՐԲԱՆԵՍԻ ՎԱՆՔ

700. ԽԱՉՔԱՐ. բեկոր, ազուցված Սյրանես եկեղեցու թաղածածկ շքանուտքի մեջ, 1 տող.

ՄԲ ԽԱՉՍ ԲԱՐԷՆԱԿՍ . . .

701. ԽԱՉՔԱՐ. եկեղեցու բեմի պատի մեջ, 2 տող.

ԵՄ՝ ՎԱՅՐԱՍ, ԿԱՆԿՆԵՑԻ
ՅՈԳՈՅ. . .

702. ՍԱԼԱՔԱՐ. մարմարյա, ազուցված հարավային եկեղեցու հյուսիսային պատի մույթին, 7 տող.

ՎԵՐԱՆՈՐՈԳԵՑԱԻ
ՄԲ ՕՅԱՆՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ
ԵՒ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆԸ
ԱՐԴԵԱՄԲ
ՄԵԼԻՔՍԵԹ ՍՕԼ
ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆՑԻ,
1902:

Ծանոթ. Ռուսական տիրապետության ժամանակներում գյուղը պատկանել է ազնվական Լորիս-Մելիքյաններին և Քալանթարյաններին: Նրանց տոհմակիցները թաղված են Սրբանեսի վանքի գերեզմանոցում՝ մարմարյա կիսանդրիներով, որոնց ժԹ դարի հիշատակագրերը չեն մտցվել «Ղիվանի» մեջ:

703. ՍԱԼՍԱՊԱՆ. վանքի գերեզմանոցում, հարթաքանդակներով, 7 տող.

Ի 18 ԳՆ	.. Ի . 18 ԳԱՐՈՒՆ]
Ի ԱՆ ՅՈՒԷԻՍ	Ի ԱՄ ՅՈՒԷ-ԻՍ (1858):
ԱՅՍՂԱԳՍՏԷԴՈՐ	ԱՅՍ ՅԱՆԳԻՍՏ Է ԴՈՒՐ-
ՄԵՆՆՈՎԱԳԵՐ-Ի ԱՅՍ	ՄԻՇ ՇՆՈՐՅԱՊԵՐԻ: ԱՅՍ
ԾԱՌԸՈՒԾԱՂԿԵԱԼ	ԾԱՌԸ, ՈՐ Ի ԾԱՂԿԵԱԼ
Հ ԱՍԱԿԻ ՀՆՁԵՑԱԻ	ՀԱՍԱԿԱԻ ՀՆՁԵՑԱԻ
ՄԱՆԳԱՂԱԻՄԱՀՈՒԱՆ	ՄԱՆԳԱՂԱԻ ՄԱՀՈՒԱՆ:

Ծանոթ. Թիվը գրված է զգեստի փեշին՝ թվատառերի սխալ տեղադրմամբ ՅՈՒԷ. մինչդեռ պետք է լինի ՈՅԷ: Գրերը տեղ-տեղ մաշված են:

Վանքի շրջապատի գերեզմանոցում XIX դ. տապանագրերը, այդ թվում Քալանթարյաններինը՝ շատ են, որոնք հարկ չի համարվել ներկայացնել: